



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2594



ՃԱՌՎ

ԸՆԹԵՐՑԵԱԼ ՅԱԿՈՒԲ ՏՕՆԻ

ՄՐՅՈՑ ՎԱՐԴԱՇԱՀ

Ի ՀԱՆԴԻՍԻ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԻԹԵԱՆ

ՅԱԽՈՒՄԱՐԱԿԻ

ՄՐՅՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՅ

1867 ՓԵՏՐՈՒԱՐ 23



ՏՊԱՐԵԱԼ

Ի ՎԱՆՈ ՄՐՅՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՅ  
ՅԵՐԱԿԱՆԵԱՐ

10987



17506-58

~~1684~~

~~182045~~



Ե. Զ. Գ.

Վերիայ Երեք Ճառերը և ոտան  
նաւոր Երգելը՝ որք Արքոց Վար-  
դանանց տօնի առթիւ կատար-  
ուած պարզեւարաշխութեան  
հանդիսին մէջ կարդացուեցան,  
Յառանդաւոր աշակերտաց ԱԿ  
ամսուան աշխատութեան արդ-  
իւնիքն և առաջին գործերնին ըլ-  
լալվոչիքը հրատարակութեան  
արժանաւոր բան, այլ՝ ՚ի վարձ և  
՚ի քաջալերութիւն աշակերտաց  
և ՚ի տեղեկութիւն ազգայնոց,  
Վենապատիւ Արքազան Պատրի-  
արք Հօր հրամանաւ և Ուսում-  
նական Ժողովոց որոշմամբը որ-  
պատրութեան կը յանձնեմ:

1867 ՄԵՐՏ 1:

ՅԵՐԱՆԱԿԵՑ

ՅԱՐԱՒԹԵԼԻ Յ. ԶԵՆԴՐԱՆԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ Յ. ԵԱԶՐԱԽԵՂ





Ա.ՄԵՆԱՊԱՏԻՒ

# ԱՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՅՈ

ԵՒ ԱՐԳՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Դաշ մահկանացու մը, որուն բոլոր գործերը գրե  
խովին ազատ ըլլան թերութենէ . այս անկարելի է, վասն  
զի մարդիկ փորձառութեան, ուսման և հետազոտու-  
թեան կարօտ ըլլալով՝ միշտ դէպ յառաջ կ'ընթանան,  
անընդհատ կատարելութեան կը դիմեն : Վարդկացին  
գործերն հերիք չեն գիտեր . և գործ մը քանի որ չըպա-  
նար, և եկողն հոն բան մը կ'առելցընէ, ըսել է որ թե-  
րի է . և եթէ թերութեանց նայելով մարդկանց գոր-  
ծերն արհամարուին՝ անկարելի է բարիք և յառաջադի-  
մութիւն յուսապ : Աակոյն բան մը կայ, որ այս թե-  
րութեանց կատարելութիւնն կուտայ, այն է բարեսէր  
և վեհանձն ներողամնութիւնը : Ներողամնութիւնը՝  
քաջալերութիւն կուտայ, քաջալերութիւնը՝ մղում, և  
մկումը նսպատակին հասնիլ կ'առեթէ . շարիքը միայն ան-  
ներելի է : Այս ներողամնութեան շնորհիւն է ազգաց  
հսկայաբայլ յառաջադիմութիւնն, այս ներողամնու-  
թեան յոյն է նաև որ այսօր զիս համբակս կը քաջա-  
լերէ պատկառելի ակմբիս ներկայութեանը իմ թերա-  
կիրթ մնացս նախախայրի պատուզը նուիրել, յայտնելով  
մեր խորհրդաց նիւթ եղող այն սուրբ առարկայն, զար  
ցոս տեսնող միաք մը առաջին անգամ՝ բնականութէ հե-

սաղթուելու կը ձգտի : Եսայ է՛ղեամբ նաեւ որ մեր մը-  
տայ կարուղութիւնն անձեռնհաս է աւոք զիսայ մարդու  
մբ ունեցած զգացումը ճշդիւ բացատրելու : Այսու ա-  
մենայնիւ կը խօսինք, յուսալով որ չեք զանար ձեր ու-  
շադրութիւնը քաջալերիչ ներողամութեամբ . ըստ ո-  
րում ինչպէս աշխարհի խոհական մասը, նայնալիս դուք  
ալ Ա համար Տեր, ճանչցած էք արդէն այն դրու-  
թեանց ճշմարտութիւնը, որոնք որ և իցէ ուշադրու-  
թեան անինաս և օդական ըլլալը կը հաստատեն ան-  
հերքելի ասրացոցներով :

Եթէ այս առարկայն գոյութիւն չունենար, արգոյ  
Հանդիսականիք, մարդուս համար խմացական կարողու-  
թիւնն աւելորդ պարագայ մը՝ մանաւանդ թէ բեռնա-  
կրաւթեան ենթարկող ծանր բեռ մը ովտի սեպուէր .  
ըստ որում խմացականին բոլոր կարողութեան միակ ա-  
ռարկայն է այն : Առ և իցէ հետաքրքիր միտք կը խուզէ  
իրերը, որպէս զի անոնց մէջ ծածկուածն երեւան հա-  
նելով իւր չնաշխարհիկ յաղթանակն ընդունի . քանզի  
գործիքի մը յաղթանակն է իրեն պատկանեալ գործին  
կատարումը : Արդ՝ ինչպէս այս յաղթանակն ստանայ  
այն միտքը, որն որ մրցման ասպարէզը մտած չէ . և ինչ  
պէս ասպարէզ ելէ, քանի որ պատրաստութիւն չունի :  
Պատրաստութիւնն է այն հրահանդը, որով միտքն հե-  
տազոտութեան ասպարէզը կը նետուի և կը քաշէ կը  
հանէ միթութեանց մէջ թաղուածները, որ այն ինքն է  
Ճշմարտութիւնը :

Ճշմարտութիւնը, Արդոյ Հանդիսականիք, յայտնի  
չէ թէ եւ ընդհանուր աչքին, սակայն ծածկուած ալ  
չէ ամեն տեսութենէ : Ինչպէս որ միտք մը իւր գոյու-  
թեան՝ այսպէս ալ մանաւոր մողեր ճշմարտութեան  
գաղափարն ունին պայծառ ըմբռնեմանք : Ճշմարտու-

Ծիւնք՝ որ ինքնադիմաբար կը ճանչցուի, ամեն որ և իցէ  
տեսութեան վրայ հաւասարապէս իւր առարկայական  
ներգործութիւնը կ'ընէ. բայց ըմբոնումները տար-  
բեր են. դարձեալ և այս ենթակայէն և ոչ առարկայէն  
պատճառեալ. վասն զի բժժուած աչքը ըւտոյն նայիլ  
չկրնար: Պատմութիւններէն և ոչ մին կը զանայ մեզ  
ասոր հաւասառութեան իրական ապացոյցներն ուսում-  
նասէր Ակումբ. Երթանք յեղյեղենիք պատմութեան է-  
ջերը, և սկիտի գոնեմք շատ եղելութիւններ, որք զմեղ  
կը հաւասառեն թէ համայն աչքերու ինքնադիմաբար  
ճանչցուող Ճշմարտութիւնը, զինքը խումբի մը և մեծ  
խումբի մը տեսութենէն ծածկող արգելքներ ունե-  
ցաւ: Ո՞ւթէ կարելի է որ զզարժնուն այս տեղ այն  
մոքերը՝ որոնք տեղեակ են, և ըստիշեն այն աշխատու-  
թիւնները, որոնք կը ջանային Ճշմարտութեան անձնուի-  
րութիւնը՝ ստութեան ծառայութիւն ճանչցունել հա-  
սարակութեան. այս տեղ գաղանային անգիտութիւննե-  
րը Ճշմարտասիրաց երեւակայութիւնը կը խուսին. որոց  
յիշատուկը սարասի կ'աղդէ զդայուն սրտերու:

Ով Ճշմարտասէր, դուն որ այսօտի ժամանակ Ճշ-  
մարտութեան ետեւէ թափառեցար, Եկուր այսօր այս  
ակմբիս մէջ մեղ ալ հաղորդէքու ստացած տեղեկու-  
թիւններէդ. մի զանար, ցրցուը Ճշմարտութեան ճա-  
նապարհն այս հանդիսին, որ այս տեղ խմբուած է՝ իւր  
կողմէն ալ նշյն իսկ Ճշմարտութեան յարդ մը ընծայե-  
լու. Եկուր, և ողբա մարդկային աղդէ: այն ողբամելի մա-  
սին վիճակը, որ բոլորովին զուրկ կը գտնուի այն լոյսէն,  
իւր կանխակալ վրէալ սկզբանը մէջ սեղմուելով՝ թէ  
«տեսութեան դէմ արգելք դնող խոչնդառ չկրնար ըւ-  
լալ Ճշմարտութիւնը ճանչնալու մասին, և ամեն որ Ճշ-

Եկուր դուն ալ փորձառու , և ստորագրէ Ճշմարտութեան ճանապարհը , ուր որ անարդել կ'ընթանան մաքերն ու դատաղութիւններն իրենց նպատակին հասնելու : Եկուր դու ալ Ճշմարտութեան վարդապետ , պատմի մեզ թէ կարող է մարդ Ճշմարտութեան հաւմիլ , և թէ Բնչակէս :

Ի՞նչ հարկ այսչափ աղերսանաց և թախանձանաց . միթէ Ճշմարտասերը զլացան իւր պարագը հասարակութեան . միթէ չիմացոնց մեզ կանխաւ՝ թէ Ճշմարտութեան հասնելու առեն շատ զանազան խոչեր կը պատահին . միթէ չհանցոնց արդէն՝ եթէ մարդիկ են որ Ճրշմարտութեան կը փափարին , և զայն արդիլողք դարձեալ մարդիկ են : Ո՞իթէ չհրատարակեց որ Ճշմարտութեան երեւելուն աշխատող մինչեւ անգամ թագաւորները՝ բնականէն դուրս մահուամբ մեռան : Ո՞իթէ յայտնի չքարողեց թէ Ճշմարտութիւնն հանրութեան տեսութենէն գաղանի պահելու համար մարդկան մէկ մասը գաղանացաւ : Ո՞իթէ փորձառուները զլացան մեզ իրենց օդասկար խելամտութիւնները : Ո՞իթէ հրապարակաւ չհրատարակեցին թէ Ճշմարտութեան առջեւ պարզուած սեւագոյն քօղը պատուելու համար զօրաւոր տուրի մը և անկէ անդին թախանցելու համար արեւուն ճառագայթներուն նման ուժգին լուսաւորութիւն ու նոլ տեսութեան մը ոլեաք ունին մարդիկ :

Ո՞հ , ուրեմն մարդիկ դեռ եւս պիտոյից կարօտութիւն ունին . Բնչակէս չզարմանաց նախատեսը , երբ տեսնէ որ Ճշմարտութիւնը միշտ տեսնել կարծող մարդը զայն տաննալու համար տակաւին առաջին աստիճանի պիտոյից կարօտութիւն ունի : Չէ . այս դէպքն այնչափ զարմանաց արժանի չէ , որչափ կարեկցութեան : Օքարմանաց արժանի չէ կ'ըսենք , բայ որում անոք տիսմարտութիւնն

աւելի օգտակար սեպեց հարստութեան ծառայել, քան  
թէ ճշմարտութիւնը պաշտպանել. անոր վսեմական շար-  
ժութիւններն աւելի ազդեցութեամբ գրգռեցան հա-  
րստութեան պաճուճանքներէն, քան թէ ճշմարտու-  
թեան ճառագայթից ներդործութիւններէն, որոնք՝ որ  
և իցէ անհատի ներքին վսեմութեանց զգացումները կը  
զարթուցանեն անվախճան բերկութիւն մը տարով։ Ա-  
նոր ականջին քաղցր հնչեց այն սնանկութեան մօտեցած-  
խաւարասէր վաճառականին ձայնը, որ իրմէ երկրպա-  
գութիւն մը կը խնդրէր. ըստ որում երկրագունդն իր  
բոլոր բարիքներով պարզեւ տալ կը խոստանար անոր վո-  
խարէն։ Անիկայ դառնութեան զանգակի հնչումը կար-  
ծեց, երբ ըեց “Ես եմ Ճանապարհ և ճշմարտութիւն  
և կեանք. որ դայ տո իս ՚ի խաւարի մի մնացէ. զի ըստ  
յաշխարհ եկի”։ Այս ձայնը մինչդեռ լսողին սրտի ան-  
եղք բերկութիւն ու յաւերժական ուրախութիւն կը  
խոստանար, տխմարութիւննն ու սնափառութիւնն ե-  
րես դարձուց և լսելիքը խցեց։ Այն ձայնին կ'ըսեմ, որ  
ընդունողին օրինաւոր բաղձանքը լեցընելու պատրաստ-  
էր, մոլեալի անուն տուաւ։

Իսկ կարեկցութեան արժանի է բախնք, ըստ որում  
չգիտեր թէ այս սլիտոյքներն ի՞նչպէս կարող է ձեռք ձը-  
գել. որուն համար այնչափ պէտք չունի հարստութեան՝  
որչափ բաղձանաց և աշխատութեան։ Քանի որ մարդս  
կը թութեամբ իւր որ և իցէ կարողութիւնը բարձրացը-  
նելու և յառաջադիմելու յարմարութիւնն ունի, չկայ  
դժուարին գործ մը՝ որ անոր առջեւ ըուծուի. առ կար-  
գէն կը սեպուի նաեւ ճշմարտութեան առջեւ սիռուած-  
քօղը պատռեն ու անոր համար պէտք եղած գործիք-  
ները պատրաստեն ալ. և այս աւելի դիւրին կ'ըլլար, ե-  
թէ այն սրոյն ինչ տեսակ մետաղէ ըլլալ գիտնայինք։

ըստ որում՝ այն անժախանց ծածկոյթը կամ վարագոյրը  
բնական նիւթ չէ. այլ տարօրինակ գոյացութիւն մբ,  
որու վրայ աղամանուն իւր հատու զօրութեան մէկ  
նուրբ գիծն անգամ չկրնար ձգել, և ոչ ուրիշ կարծք  
մշտագայ կորող զօրութիւնն անոր վրայ աղդեցութիւն  
մ'ունի:

Այս տեղ վարանելու հարի չկայ, Արդոյ անդի-  
սականք, և ոչ տարսկուսիլ ալետք է: Դանակով ծով չը  
սպասոիր, և ոչ ալ խարազանով խռար կը հալածուի:  
Ուղրեալ նառ մը կողմացոյցով միայն կրնանք ուղղել:  
Կախապաշարումն իւր խորտակիչ կացինն ունի, ճշմար-  
սութեան ծածկոյթն ալ իւր սպասուիչ ուրն ունի.  
որուն մետաղն հասարակ մետաղայ հանքերուն կարգը  
չդանուիր, և ոչ երկրագնդին այս կամ այն լեռանց ըն-  
դերաց մէջ. բայց միայն բանական լեռանց կեղրոնն ար-  
մատացած՝ իւր գրդուիչ զօրութեանը կ'ապասէ որ երե-  
սի, և իւր դարմաններուն միայն կը կարօսի զործուն-  
եայ ըլլալու համար. որն որ մինչեւ ցայս վայր ոմանց մէջ  
փայլուն, ոմանց մէջ ժանդոտած, և ոմանց մէջ ոչ փայլ  
ունի և ոչ ժանդ: Անոնք որ փայլ չունին, յետանին զարնելու-  
է: Հողմ չկեցած առեն՝ նառին համար առագաստը ո-  
չինչ է. գրել չփիտցող վաճառականին գրին արձանա-  
գրութիւնն ըներ, առանց կարդացողի գիրքն ինքնին ան-  
խօս է և անօդուտ, առանց իւղի սուրն յետանին քսելը  
սուրը մաշելէն ուրիշ արդիւնք մը չկրնար ունենալ:  
Ասանկ ալ առանց հետազօտութեան մարդ իրերն ան-  
գամ չկրնար տեսնել, ուր կը մնայ ճշմարտութիւնը, որ  
անոնց մէջ ծածկոյթի տակ է հասարակութեան համար:  
Վարդո բնաւ ճշմարտութիւնն մը չկրնար դանել, եթէ  
դաստողութեան մէջ յաջողակ չըլլայ. և այս յաջողակու-

թիւնը ուրիէ ստանայ մանուկ մը՝ որ դպրոց ի՞նչ է ք  
 դիտեր, և գուցէ չտիտի գիտնայ կենացը մէջ։ Ծերեւս  
 ըսէք թէ դպրոցը մարդէն ելած է և ոչ մարդը դպրո-  
 ցէն։ Ճշմարիտ է, տակայն սա ալ անուրանալի է թէ՝  
 որչափ որ հունտը պտուղէն յառաջ եկած է, ճշմարիտ  
 է նաեւ որ պտուղը հունտէն կ'ելլէ։ Դպրոցներու հաս-  
 տառուն բարեկարգութիւնն ու մանկանց ուղիղ դաս-  
 տիարակութիւնն է, որ հետազօտութիւնն արդիւնա-  
 ւոր կ'ընէ։ որուն համար մինչեւ ցայսօր ամեն ոք վիա-  
 յած է։ Նաեւ ճշմարտութեան արիւնըուշու թշնամի  
 մարդահաճոյներն անդամ չեն կրնար ուրանալ և պիտի  
 վկայուի շարունակ, մինչեւ որ ճշմարտութեան ըսն ա-  
 րեւու նման ճառագոյթելով՝ անհետ կորուսին ստու-  
 թեան բռնակու դրօշներն առաւօտեան աստեղաց նման։  
 Եյս կէտիս անուրանալի է մնդէդ անցածը Արդոյ Հան-  
 դիսական, գիտեմ՝ որ պիտի ըսես թէ ամեն տեղ դըպ-  
 րոցներ կան։ բայց ես ալ կ'ըսեմ՝ ի՞նչ օգուտ սյն դըպ-  
 րոցներէն, քանի որ մարդիչ չունին։ Ի՞նչ օգուտ մարդի-  
 չին, քանի որ անաշխատ է և տգէտ։ Ի՞նչ օգուտ մարդ-  
 չի մը աշխատութենէն, քանի որ հաղորդելու կարող չէ։  
 Ի՞նչ օգուտ մարդչի մը հաղորդելու կարողութենէն,  
 քանի որ բաղձանիքը և քաջալերութիւնը չզուգընթա-  
 նար անոր աշխատութեան։ Ոիտի քանիթւ, ի՞նչ օգուտ  
 կրնայ սպասուիլ աշակերտին այն դպրոցն յաճախելլէն,  
 որուն դաստիարակը ժամացոյցին դիմացն անցած՝ օրա-  
 ցոյցի թերթերը կը դարձունէ։

Դւրաբանչւոր միտք թող իւր հայրենի գաւառը սը-  
 լանայ և անոր գիւղօրէից և քաջաքայ դպրոցներու վի-  
 ճակին վրայ ակնարկ մը ձղէ և տեսնէ թէ՝ Հայն ալ  
 մէկ դպրոց մ'ունի, որ այս խղճալի վիճակէն ազատ  
 ըլլաց։ Ոիթէ առաջին տեսութեամբ աշակերտաց դա-

տարկութիւնը պիտի չտեսնէ՞ : Այլժե պիտի ծածկուին իւր աչքեն աշակերտաց այն հնարագիտութիւնը , որ դասագրքին մէջ խաղեր հնարած , անով կը զուարձան . որոնք իրենց համար ժամանակին ՚ի տուգ պիտի փոխուին . վասն զի անգին ժամանակին ՚ի զուր վատնելով իրենց մոտաց ունեցած բնական քիչ մը կորովին ալ , որ դաստիարակութեամբ աճեցուն պիտի ըլլար , չնչին հնարից ծախելով կը մեղկանան և անպիտան կ'ըլլան : Այլժե պիտի չիշէ՞ աղբայնոց այն մեծագումար ծախքերը՝ զոր յօժարակամ կ'ընեն , որպէս զի օդուտ մը քաղեն . սակայն միշտ իմաստակար հետեւութիւններ կը վայելեն : Ի՞նչպէս չմոլոմոքի զգայուն սիրտը , տեսնելով որ ապագային իմաստոց առաջքն առնելու համար ներկայիս եղած աշխատաթիւնը մեծամեծ վտանգներ կը յարուցանէ և նոյն խել ապագայն աղետալի կ'ընէ , զոր փորձառութեանց մակարերութիւններն հաստատեար կ'եղ բակացունեն :

Այս ամեն աշխատութիւններն ու ծախքերը չեն խընայուիր Արդոյ Հանդիսական , ոչ որպէս զի անօդուտ միանդամայն և իմաստակար արդիւնքներ ստանանք , այլ որպէս զի լոյս ստանանք , և մեր մէջ հաստատեալ խաւարն անհետ կորսուի . որպէս զի առջեւնիս բացուած խորխորացը տեսնենք . . . . . : Ի՞սկ այս նպատակը նրանի մարդոց ծանօթ , այնչափիին՝ թերեւս անկիէ աւելին ալ անծանօթ է : Ո՞ր ցամաք ելլել կ'ակնկալես այն նաւուն , որուն նաւուզիղը չդիտեր դէմ եղեալ նպատակը , և ոչ կայան մը հանելու շաւիղը : Ի՞նչ հանդըստութիւն կրնայ յուսացուիլ այն նաւագնացութեան մէջ , որուն նաւավարն անխործ է և ամովերէն չկրնար զուշակել մերձակայ փոթորիկն ու մօտալուտ վտանգը : Այժմափէ՛ նաւաղետ , զուր տեղն է ոյդ ճանապարհոր

դութիւնը՝ որ բաղդի վրայ կը կսցանայ . սթափի՛, ցա-  
մաք ելիր , կրթութիւն առ նաւուղղութեան մէջ, ապա  
ճանապարհորդէ դէմ եղեալ նպատակդ, և ահաւասիկ  
կարող ես հանիլ խաղաղ նաւահանգիստը :

Ուրեմն ըսելէ թէ մարդիկ ամեն պարտգայի մէջ  
Ճշմարտութեան հակառակ ողիները տապալելու համար  
որ և իցէ աշխատութիւն խնայելու չեն . ըստ որում,  
պատիւը՝ որ մարդուս բարոյական պիտոյից մին և դրւ-  
խաւորն է , Ճշմարտասիլութենէն կախեալ է . որ ու-  
րիշ բան չէ՝ բայց եթէ պարտքն ու իրաւունքը ճանչ-  
նալ և գործադրել . և որովհետեւ Ճշմարտութեան սէրն  
անոր արժէրը ճանչնալէն եռքը կը ծագի բնականաբար,  
ուստի կը պարտաւորի ներկայն՝ ապագային , նախորդն՝  
յաջորդին և ընկերն ընկերին Ճշմարտութեան ճանա-  
պարհն աւանդել : Եւ քանի որ այս պարտաւորութիւնն  
հաստատուն է , դաստիարակութեան բարուզութեան  
հոգածութիւնն ալ ներկային անխուսելի և նուիրակոն  
պարտքն է , որ իրաւամբ կը պարտաւորէ դապագայն՝  
իւր աշխատութիւնն արդեամբ պսակելու . որով տարին  
տարիին , և դարը դարուն օրինաւոր արդիւնքներ տա-  
լով, մարդիկ ալ իրենց արժանաւոր պատիւը կ'ըստա-  
նան : Ե՞հաւասիկ այս պատիւն է , որ այսօր կուտայ ե-  
կեղեցին ալ իւր Ճշմարտասէր և ջերմ որդւոյն Ա արդա-  
նայ և անոր ոգւով վառուած արի Կահատակայ , որոնք  
իրենց անձը Ճշմարտութեան վրայ փոխանակելով , թէ  
իրենց ընդունած դաստիարակութեանն օրինաւոր կեր-  
պիւ պատասխանեցին , և թէ ապագայէն Ճշմարտասիրի  
արժանավայել պատիւն ընդունեցին և կ'ընդունին :

Վենիք ալ որ այսօր անոնց յիշատակաւն հու ժողո-  
ված ենք , չքաւականանանք միայն յիշատակն անմուաց  
ունելով . վութանիք անոնց շաւղին հետեւելու :

Խրախուսինք Հայկազննք, բատ որում մեղ ալ ուրիշ  
բան չպակսիր նոյն յաղթանակը ձեռք ձգելու, բայց ե-  
թէ կամք և փոյթ, որոնցմ՝ թելադրուած զօրութեամք կը  
կարողանանք որ և իցի խոչնդոս առաթուր կոխել։ Ա-  
նոնցմէ աւելի գերազանցը գործելու պարտաւորու-  
թիւննիս յիշենք։ Թաղը բերկերին մեր նախնեաց ոգիներն  
ալ տեսնելով իրենցմէ գերազանց գործելու Ճիգն ո-  
նին իրենց որդիքը։ Յաջորդութեան սլարտքն ու իրա-  
ւունքը ճանչնանք։ Թաղ Հայն ալ ճանչնայ Ճշմարտու-  
թեան արժեքը, որպէս զի երջանկութիւն մը ճաշակէ։  
Եւ թաղ զուարթանայ Զեր գթած սիրան ալ Վեհա-  
փառ Տէր, որ Զեր որդիքը իրենց նախնեաց ոգւոյն  
Ժառանգորդ ու Ճշմարտութեան սիրովը վառուած յա-  
ւիտեան երախտապարու պիտի մեան Զեր ջանիցը, և  
Վագին ու սուրբ Աթոռոյս օգտակար ըլլալու պիտի  
Ճգնին։

ԱՆՔՐՍԱՆ ՄՐԱՊԵԱՆ  
ԿԵՑՎԵՑԻ



Վեհափառ Տէր, և արդոյ Հանդխականք։

Վաղբութեանց ասպարեզին վրայ իւր դիւցաղուննե-  
րով երեւելի հանդխացող Թորգոմական գրահիս խրա-  
քանչլուր անհատի որտին մէջ հայրենասիրական սուրբ  
զգացումը արծարծող, և անոր երակներուն մէջ կեն-  
սական ողին բորբոքող, անոր երեւակայութեան առ-  
ջեւ մտադրութեան արժանի գեղեցիկ յիշատակներ ներ-  
կայացընող բարերաստիկ աւուրս զուարթագին ծաղու-  
մը, ինչ ներդործութեամք որ ձեր բարեսէր կիրքերը

շարժելով, սյս շքեղ կաճառու կտղմել թելադրեց, նոյն  
 ներգործութեամբ իմ զգացմանց ալ ազգելով մտացա  
 խորհուրդը գրգռեց. և թոթով լեզուիս պրոասանու-  
 թեան զօրութիւն շնորհելով՝ քաջալերեց ասպարեզ եւ  
 եւ և Ժառանգաւորացս սրտի խորերէն բղխած ամեն  
 պարտականութիւն պարունակող զգացումը այսօր սիրե-  
 լի ազգիս ողջամիտ մասին ներկայացրնել. բայց ոչ իբր  
 գիտութեան հիւթը կատարեալ ծծող անսպատրաստ ա-  
 տենաբան մը, որ աղբերահոս իմաստակից խօսքերով վր-  
 ձիոներ կ'արձակէ, այլ իբր համբակ՝ անհեթեթ քա-  
 նիցս յօդաւորութեամբը ըստ կարի այնպիսի նիւթոյ մը  
 վրայ ճառելով, որուն իշխանութեան քաղը լուծին  
 տակ գլուխ խոնարհեցընելը բանական էակին նուիրա-  
 կան պարտիքնէ, այնպիսի վեհապանծ սկզբան մը արտա-  
 յայտութեան պաշտօնն ունիմ այսօր. ուրկէ կախումն  
 ունի ըստ ամենայնի մարդկային ազգին երջանկութիւ-  
 նը, և յորմէ յառաջ եկած է հանդիսիս շքեղութեան  
 պատճառ եղող դիւցազնական առաքինութիւնը իւր ար-  
 գասկրներով մէկանդ. և վերջապէս սկզբունք մ'է այն՝  
 որուն յարդը դարուս մէջ ճանչցուած է ըստ ամենայնի,  
 և որու համար դուք՝ ուստիմնասէր Հանդիսականիք,  
 կ'աշխատիք ըստ չափու. Ասանկ բարձր նիւթի մը վրայ  
 խօսիլը իմ կարողութենէս վեր ըլլալը կը ճանչնամ, սա-  
 կայն ինչ նիւթ կը նայի ընտրել, որ անվարժ մտօրս կա-  
 րող ըլլայի լսովին բացատրել. ուստի խոնարհաբար մեր  
 թերութեանց Չեր ներողամտութիւնը և հաճութեամբ  
 ունկնդրութիւնը կը խնդրեմ ՚ի խրախոյս համբակիս:

Վարդս ՚ի սկզբանէ բնական ըստ մ'անի. այն ըստը  
 իւր պայծառութիւնը միմիայն դաստիարակութեամբ  
 կը նայ ամբողջ պահել. մարդս ամբողջապէս՝ դաստիարա-  
 կաթեամբ կը զանազանի միւս արարածներէն, և ճշմա-

ըիս բանական էակ կը ձեւանայ . դաստիարակութիւնն է որ մարդուս բարբը կը մարբէ , երեւակայութիւնը կը զարթուցանէ , յիշողութիւնը կը զօրացընէ և տրամաբանութիւնը կ'ուղլէ , կիրքերը կը թելով մտաց իշխանութեան կ'ենդարկէ . բանական էակը միմիայն շնորհիւդաստիարակութեան կընայ իւր առ անհուն էակն , առ մարդիկ և առ աղջն ունեցած պարորը լիովին ճանաչել և անթերի հասուցանել . մարդկութեան մարմնոյ քօղին տակ ծածկուած անմահ հոգւոյն յարգն ու պատիւր ճանաչել . վերջապէս մարդուս իւր հասաչին ճշմարիտ պատկեր լրացը դաստիարակութենէն կախումն ունի :

Խոկ ասոր հակառակ անդաստիարակութիւնը ուրիշ բան չընէր մարդս , բայց եթէ մարդադէմ հրէշ մը . անդաստիարակութիւնը՝ մարդկային հոգւոյ զգացումներէ , ընկերական սիրոց և քաղաքականութենէ զրկելով՝ վայրի գաղանաց կը նմանէցընէ զմարդ , և մինչեւ անդամ խօսելու յատկութիւնը կ'առնու ձեռքէն : Ասոր ապացոյց , պատմութենէ կ'ուսանիմք որ լեռները ծնող օրիորդ մը անբան կենդանեաց պէս ճիչ միայն կը բառնար . բայց դաստիարակութիւնը մարդկութեան պիտանի անդամ ըրաւ զայն : Ամերիկաց իւր վայրենութեամբ միայն ծանօթացաւ մեր նախնեաց . բայց մեղ՝ իւր մարդասիրութեամբ , ազատասիրութեամբ , և իւր իմաստութեամբ . այս երկու հակառակ արդեանց առաջնոյն անդաստիարակութիւնը , և երկրորդին՝ դաստիարակութիւնն է պատճառ :

Ուրեմն մարմնաւոր և հոգեւոր ծննդք , այս վճիռը զձեղ պարտուց կ'ենթարկէ . ուստի մինչեւ ձեր այս սրբագան պարորը չվճարէք , երբէք ազատութիւն չկայ ձեղ . ոչ ապաքէն քաղաքական իրաղութիւններն ալ այս պէս կը հաստատեն . քանիզի եթէ մեկուն պարոր ունեւ

նայք և մինչեւ որ չհաստցանէք, դասաւորը բանտե՞ն  
 կ'արձակէ, քաւ լիցի. դուք ալ բարոյալէս կաշկանդ-  
 ուած էք ձեր զաւակաց կրթութեան պարտուց ներքեւ.  
 դու մարմնաւոր ծննդ, մանաւանդ մնյր, քու զաւակդ  
 չես դաստիարակէք. անոր ամեն կամքը կը կատարես,  
 մեծյած ժամանակը մարդ մտիլ չընէք. մինչեւ անգամ  
 քու դէմի կ'ասերախտի: Այժէ այսափով գոհ ըլլայ՝  
 հոդ չես ընեք, ինչու որ ցանածդ կը քաղէս. սակայն  
 այսափով հերիք չսեպէք իւր կրից բռնութենէն, այլ  
 իւր ընկերին իրաւունքը յափշտակելով՝ անոր կեանքը  
 կը վրդովէ. մարդկութեան, քաղաքականութեան և ազ-  
 գութեան պարտուց և օրինաց կը դրժէ. իւր հայրենի-  
 քը կ'ուրանաց, մինչեւ կրօնիքը իւր անարդ կրիցը գոր-  
 ծիք ընելով՝ խաբէութիւններ և չարիք կը գործէ: Դի-  
 ցուք թէ այս ամենը ընելու կամքը ապատ ըլլար, բայց  
 սկէտք է դիսնալ որ կամաց ազատութիւնը՝ մտաց խոր-  
 հելու ազատութիւնէն ետքն է. սակայն չեմ գիտեր թէ  
 առանց ուղիղ դաստիարակութեան ինչպէս կ'ըլլայ խոր-  
 հելու ազատութիւնը: Այժէ երկիրը առանց հերկելու  
 և աղէկ հունաեր ցանելու բարի և օգտակար պառուղ  
 կ'արտադրէ, չդաստիարակուած մոքէն ալ ուղիղ խոր-  
 հուրդ կը ծնի. և ինչպէս որ երկիրին ինքնին բուսուցած  
 փուշն ու տատասկը կը քանդենք, անանկ ալ մտաց ան-  
 ովիտան ու նուաստացուցիչ խորհուրդները ճշմարիտ  
 դաստիարակութեան ձեռօք սկէտք է արմատաքի խլել,  
 անոր տեղ բանականին պատիւ բերող և իւր էութիւ-  
 նը հաստատող սկզբունքներ սերմանել. որպէս զի խոր-  
 հած և խօսած ատենը կենսատու հիւթի նման մարդուն  
 հոդին կենդանացընէ:

‘Երեցէք համարձակութեանս Աեհավառ Տէք, և  
 դուք բարեմիտ անդխականք, և ուրախութեամբ զը-

ւարթացէք որ թէ՛ նիւթապէս և թէ գործնասլէս ջանքերնիդ ապարդիւն չեն ելլեր . այլ այնպիսի աշակերտներ կը մասուցանեն , որոնք այժմէն կը պարսաւեն չարիքը և կը պատռւեն բարիքը . որով և ժամանակին կատարելիք պարտքերնին կանխառ կը ճանաչեն և վճարել կը խոսանան :

Խոկ արդ՝ երեւակայութեամբ ոլսցէք զէպ ՚ի մեր հայրենիքը , այն մարդկութեան խանձարուրն եղող Հայաստանը և տեսէք թէ մը է այն օրինապահ Հայը . ավան . մէկը Հռովմայ գիրիք , մէկը Վնդղիոյ և ուրիշ մը չպիտեմ ուր . . . դիմած են . որով ազդին ամբողջութիւնը պառականեցաւ . անդաստիարակութիւնն է ասոր պատճառը . վասն զի չկրնալով իւր հեշտասէք կիրքերը մասց ուղիղ դատման իշխանութեան տակ նուածել , ամենէն նուիրական պարտքերը զբացաւ , և ամեն բան իւր անարդ հեշտութեան զոհեց :

Վրդ՝ անդաստիարակութիւնն յառաջ եկած չարիքները գիտնալով՝ կրթէ զաւակդ , ճանցնուր անոր Ճշմառութիւնը , և սորվեցնուր անոր Ճշմարտութեան համար նահատակուիլ . ահա այն առեն օրինաւոր ծնող ես , և քու զաւակդ պատով պահանջելու իրաւունք ունիս , և ան ալ անշուշտ քու իրաւունքդ սլիտի ճանաչէ . ըստ որում գրեթէ անհնար է որ մշակուած ծառ մը պտուղ չըերէ ժամանակին :

Դաստիարակութիւնը մեր հոգւոյն երկու կարողութեանց , մտաց և կամաց կը վերաբերի . և ինչպէս որ ամեն գիտութիւն կրնայ ուղիղ և վրէպ ըլլալ , սոյնպէս ալ դաստիարակութիւնը :

Վիաքը ուղիղ դաստիարակութեամբ է որ իւր հետախոյդ զօրութիւնը ՚ի գործ դնելով՝ իւր գոյութեան մեղքնոտիապէկենէն սեայհական ունեցած բնական լուսով

ըրաւտկանանսոր և անյագ բաղձանօք մը կը մղի նորանոր  
 հմտութիւններ ստանալու , դանաղան գիտութեանց ըր-  
 կըզըռնիքներով ճոխանալու . ուղիղ դաստիարակութեան  
 շնորհիւն է որ իւր յուղիչ և որոնիչ հանգամանօքը կը  
 սկսի ընութեան խորերը թափանցել , և անոր մէջ գըտ-  
 նուած գաղտնիքներուն խելամուտ ըլլալով , անոնցմէ-  
 լնդ հանուր սկզբունքներ ՚ի լոյս ընծայել յօդուտ մարդ-  
 կութեան և ՚ի փառս Հաստչն տիեղերաց : Այս , միտքը  
 ուղիղ դաստիարակութեամբ կրնայ իւր վսեմ բնութիւ-  
 նը ՚ի գործ դնելով , արծոյ նման դէսլ յերկինս սլանալ ,  
 և այն թանձրախիտ անստուգութեան ամպերը իւր ի-  
 մացական կարողութեամբը պատառել անցնիլ Ո՞վսէսի  
 Յորդանանու ջրերուն ազդած ներդործութեան նման .  
 ուրկէ կը հասնի մինչեւ յաթոռ Ամենակալին և իւր  
 յարգական խոնարհութիւնը և ծառայական երկրապա-  
 գութիւնը մատուցանելով և խոստովանելով անոր զօ-  
 րութիւնը և մեծութիւնը , բերկրութեան և զարմաց-  
 ման դրախտը կ'իջնայ : Ո՞հ , այս ի՞նչ բարիք է մարդուն-  
 ո՞հա այս աստիճան բարութիւններ կը ծնանի ուղիղ  
 դաստիարակութիւնը :

Իսկ երբ վրեպ ըլլայ սյն , այս , դարձեալ այս ներ-  
 գործութիւնները ՚ի գործ կը դնէ , բայց հետեւու-  
 թիւնները վրեպ սուտ և սխալ են . կրնայ գաղտնիքներ  
 պարզելու աշխատիլ և գիւտեր գտնել , բայց խաբեա-  
 կան են . ինչպէս է Պաքոնէ և Տէքարտէ յառաջ գըտ-  
 նուած վիլխովսյից Շնական դիտութեան մսսին ունե-  
 ցած կարծիքնին . ըստ որում Տէքարտ և Պաքոն՝ զօրա-  
 ւոր վասաերով , ապացոյցներով ջրեցին , և իրենց գիւ-  
 տը վարձառութեամբ , հետազոտութեամբ հաստատ-  
 չին , որն որ անհերքելի է : Վաղաքական իրողութեանց  
 մէջ անդամ վրեպ դաստիարակութեան արդեան ի՞նչ տօ-

այստեղ պատճենութեան է . ապա մը իւր խո-  
սազութեան հասեար օդինուաց իւրաքանչփռութիւն մը հաս-  
տառել կ'ու ղէ , ժողովրդեան մէկ մասոց վըսէ ով գաստիա-  
րակեալ ըսլարով ծուռ հայեցալութեամբ միաւզետու-  
թիւն կ'ու ղէ : Աւ զիդ դաստիարակեալ մասն ալ իւր ու-  
ղիդ հայեցալութեամբն ու հեռատեսութեամբը առա-  
ջայն կը մասնէ և առհմանադրութիւն կ'ու ղէ . ասկէ  
յառաջ կուդան իու ովութիւններ , ինչպէս որ Վարու-  
եան ազգին ալ անհանով չէ այս . բայց է որ եթէ ապա  
մը գաստիարակուած ըլլայ , համամիտ և համակամ կը  
պործէ , և կը յառաջանայ թէ ուսմանց , թէ արտես-  
աց և թէ պիտութեանց մէջ :

Ես այսօդ ալ ուղիղ և վրէպ գաստիարակութեան  
աքրեամբ յիշատասկը մեր երեւ ակայութեան առաջ կը ներ-  
կույցանայ : Վեստ ընդ հայրենասէր Վարայր դաշտը , վութն  
արշանուած գետին եղերը , մասդրութիւնդ հնա անոր վրայ  
յացէ . ուր պիտի տեսնես աս երկուքին մէկմէ կու դէմ  
պատերազմիք . վրէպը իւր կողմէն անօրէն Վասակ մը  
և Յաղկերտ մը յառաջ կը ըերէ ուղղութեան դէմ  
անոնց չարութեան և գաղանութեան հագուստ հագոր-  
նելով : Իսկ ուղղութիւնը՝ յարդելի , պատուելի բարու-  
թիւններով զարդարուած դիւցակնական Վարդան մը ,  
սաւը կը օնի և ազգութեան սիլույս վառուած՝ Վեստի-  
եանց դաս մը և քաջ ախոյեաններ կը կանգնեցրնեմ , ու  
անոնց՝ ճշմարտութեան զրահը հագորնելով . ասուր մէկ  
մէկու վրայ կը յաշճակին արծուս նման , ամնկերուն մէկ  
մէկու զարնուելուն աղէս իրալու զարնուելով կայծակ  
մէջ կը հանեն , որով վրէպը կ'ոսքի , յաճիւն կը դառնայ  
կ'ոչնչանայ . իսկզ ուղիղը կը լուսաւ որին , և իւր լուսաւու-  
րութեամբը առջէն մը կը օնի այս , հաւսաց եղջիւրը բարձ-  
րացրնելով , մինչեւ ներկույց յուստուրեալ դարս , ողուն ,

ամբողջ, անարատ կը հասցընե, յաւ խռեանս ալ հատու-  
տագետ ամբողջ հասցընելու յուառիք։ Աւրեւին վանոք ու-  
ղիղ դաստիարակութեան։ Թուղ անազարտ քանդակութիւն  
ու զիղ դաստիարակութեան քարիքնելուք և փառացած քաջ-  
նահատակաց շիշառակը՝ անոնց սուրբ վարդապոյն ար-  
եան շնորհիւ հաստատ մնացած թորդումական ազգի  
սրուի մէջ։

Եւ մենք, սկզեւ ընկերակիցք, մենք որ դաստիա-  
րակութեան կենաստու զեփիւռը կը չնչենք, գիտնանք  
զայն վայելելը, և անկէ յառաջ եկած բարիքները ճանչ-  
նալով հետեւինք և աշխատինք յօդուռ ընկերին, չե թէ  
ուսրդամիտները խարելու . ուսանինք գիտութիւնը,  
բայց չե թէ Յուլիանոսի ոկէս, այլ մեր առ Վատուած,  
առ մարդիկ և առ ազգն ունեցած ուսրուականութիւնը  
ճանչնալու և կատարելու համար . ուսանինք գիտու-  
թիւն և առաքինութիւն գործենք . և ահա այն առևն  
կ'ազատինք գերութենէ, տաստնումէ և անստուգու-  
թենէ . Ո՞նք զմեզ կը ճանչնանք և մարդկութիւնը սու-  
րելով՝ կրօնիքնիս, աղբելնիտ, և մեր սուրբ նախահարց  
օրինաւոր հրամանները անթերի կատարելով, կ'ըլքնք  
բարի մարդ և մարդկութիւն սիրով ու անոր սիրուանի  
անդամ։ Դոհութիւն երկնից որ այս մասին բարեբաղդ-  
կը զանուինք . ունինք խնամմառատ Վարերար մը, ունինք  
ուսումնասէր Վեհապետ մը և Ոխարանութիւն մը, ո-  
րոնք ազգին ձեռնառութեամբը ամեն ճիգ կը թափեն .  
որոնց կարողութեան և յաջողութեան համար Վախախ  
նամաւթեան օրհնութիւնն ու գլխութիւնը կը հայցեմք .  
ունինք այն քարեգութ ազգասէր Հայր մը, ունինք Վե-  
հանգեանց օլրուր կրող Ախոնի մանկանց պաշտպաններ .  
որոց խաղաղ և երջանիկ կեանք կը խնդրենք եռամուռն  
ձայնիւ օրհնութիւններ ուսրատանքներ վերտուսքելով .

Եւ դաք, Վեհափառ Տէր, ձեր հայրական գործից  
շարժեալ ընդունեցէք մեր այս երախտագիտութեա-  
փունջը՝ զոր ՚ի սրակ կը նուիրեմք իբր բոլոր որդւոցդ  
դպաշման թարգման հանդիսանալով։

ՅԱԿԱԲ ՅՈՎԱԿԻՄ ԱՆՈՒՇԵԱՆ

ՊՕԼՍԵՑԻ

Արքաղան Հաքք և Վրդոյ Հանդիսականք։

Եթէ կենցաղոյս մէջ առ հասարակ ամեն աղդի հու-  
մար, և կամ որ և է մարդկային ընկերութեան իւրա-  
քանչիւր անհատի թէ իւր առանձնութեան և թէ ըն-  
կերական կենակցութեան մէջ կատարեալ երջանկութիւն  
մի կայ, անշուշտ այն միայն է ճանաչել իւր պարտքը, և  
տէր ըլլալ իւր իրաւանց, և անոնց համար միայն ապ-  
րիւ և մեռանիւ։

Այս նուիրական ու վսեմ սկզբունքը, ինչպէս որ շա-  
տերուն սիրտը գրգռեց ու անոնց ուշը գրաւեց, նոյնը  
այսօր իմ տկար միտքս ալ յուզելով կը իրախուսէ և կը  
բռնադառէ զիս, առանց տկարութիւնս և անձիս ան-  
քաւականութիւնը նկատելու այսպիսի բարձր ձեռնար-  
կութիւն մը ընել, որն որ ձեռնհասութենէս վեր ըլլալը  
ճանչնալով կանխաւ ձեր քաղցր ներողամտութիւնը կը  
հայցեմ, որուն յուսով վստահութեամբ քաջալերուած  
կը համարձակիմ մոնել բանախոսութեան ասպարէզը, և  
նուիրել իմ նորավարժ մսքիս առաջին պտուղը, որն որ  
նախկին ըլլալուն համար իրօք ներողամտութեան ար-  
ժանի է։

Պատուաց սկզբունքը, Արքազան Հարք, որ հազարա-  
ւոր միջոցներով մարդուս հոգւոյն մէջ երեւան կ'ելլէ,  
և օր յաւուր կը զարդանայ, մէկու մը ծնած և սկիզբ  
առած վայրկեանին կ'ըսկսի ծլիլ. և շատ առթիւ կ'աճի  
ու կը զարդանայ, սակայն որչափ լուսաւորի միտքը և ուս-  
ման այն անհուն տսպարեզին մէջ յառաջ երթայ, այն-  
չափ աւելի կը զօրանայ, անուրանալի ճշմարտութիւնն մի-  
է որ այս քաղցր լուծին տակ չենթարկուող մէկը չկայ,  
վասն զի ուր մարդ կայ՝ հոն պարտուց և իրաւանց լո-  
կզբունք կայ, և թէ և մարդկանց անհոգութիւնն ու-  
զանցառութիւնները յաճախսակի սլատահելով կը խա-  
փանեն անոր գեղեցիկ արդիւնքը, սակայն աշխարհիս  
բոլոր դարերուն մէջ պակսած չեն այնպիսի հոգիներ որ  
պքանչելի կերպով փայլեցուցեր ու զանի մարդուս ներ-  
սիդին տնկող Արտօնին փառք բերած են:

Ո՞ . . . ի՞նչ երջանիկ պիտի ըլլար մարդկային ազգը  
եթէ այս վեմ զգացումը զարդացուցած ըլլար, իւր ամ-  
բողջութիւնը կազմող բոլոր անհատից սրտին մէջ :

Եւր պարտուց և իրաւանց ծանօթութիւն չկայ, հոն  
երջանկութիւն չկայ, և երջանկութիւն չեղած տեղն ալ  
մարդս ուրիշ բան չէ, բայց եթէ հողմերէն քշուած փոշի  
մը, որ երբեմն մժնողութիւն, և երբեմն երկրիս մակերե-  
ւոյթին վրայ կը թափառի անհասաստութեամբ : Ո՞վ որ  
չշտար թէ ի՞նչ է իւր պարտքը, չգիտէր նաև ինքզինքը.  
առանց պարտուց իրաւունք չկայ. ով որ իրաւանց միոյն  
հետամուտ է, բռնաւոր է, և բռնութիւնն ալ գազա-  
նական է . . . սակայն այս զգացումը որչափ որ հասարա-  
կութեան առջեւ աննշմարելի և մոռցուած է, դարձեալ  
բնութեան պատրաստած տարրը իւր դոյտթիւնը չը-  
պառէր, այլ տեղ մը կայ, ուր նա միշտ անապական կը  
մնայ, և ուրիշ երբեմն կը բարձրանայ և կը յսցնէ մոր-

դուն իւր կը պատեմիւնը, և կը հասկցունել թէ ինք այն  
աշխիսի ուղիւղէն կանոն մի է, որուն տակ կը գոնուին մար-  
դասիրութեան, ընկերսիրութեան, հայրենասիրութեան  
և ազդասիրութեան վեհ ողիները, որք մրրկացող ովկի-  
անոսին վրայ ցոլացող աստղի մը նման իրենց ըստը կը  
հեղուն և կը տարածեն մարդկացին ազդի վրայ՝ յանդէմա-  
նելով անոնց անդլայութիւնը :

Ո՞ւ... ի՞նչ վսեմ ողիները են անոնք, որք դաւերով  
արեան ճառաղեաց մէջ լողացող աշխարհի մը աղասու-  
թեան նահատակներ հանդիսացան . մոտաց լուսուորու-  
թեան և ուսմանց յառաջադիմութեան առաջնորդ ե-  
ղան, կենաց անդորրութեան և ազդի մը վերակենդա-  
նութեան պատճառ կանգնեցան, որով ազդասիրութեան  
և հայրենասիրութեան յաւերժական արձան մը կանգ-  
նեցին մարդկանց սրտին վրայ . ի՞նչ քայլը զգացումներ  
կ'արթննան մարդասիրի մը սրտին մէջ, երբ իւր պարագը  
կատարած կ'ըլլայ, և ի՞նչ ոէր ու համակըրութիւն կ'առ-  
թէ մէր սրտին՝ երբ մէկը մարդկութեան համար մինչեւ  
իւր կերանքը չնայեր . վասն զի մարդասիրութեամբ է  
որ կըզգայ մէկը բնութեան առթած բերկրութիւններ-  
ը, վասն զի մարդասիրութիւնը աշխարհի ամեն քան-  
ձերէն վեր է և թանկագին . մարդասիրութեան քաղ-  
ցլութիւնները զայն ՚ի գործ դնողները միայն կընան ե-  
րեւակայել . մարդասիրութիւնը արգոյ անդիսականք,  
այնազիսի բնական բարեւսէր կիբք մըն է, որ զայն Ճանչցո-  
ղին սիրուը կը զարդարէ ամեն տեսակ առաքինութեամբ .  
սակայն մարդասիրութիւնն ալ պարտուց ճանաչման ար-  
դիւնքն է : Վարդասիրութիւնը այն կայ ամեն անհատի  
սրտին մէջ դրոշմուած, ինչպէս որ պարտուց սկզբունքը,  
բայց զայն գործադրող խիստ քիչ կը գտնուի . այն կան  
աշխարհի ամեն կազմ ախուռած մարդկացին անհամներ,

բայց ուր կրտանուի մաշտկութիւնը . այս կայ պարտաց  
 և իրաւանց սկզբունքը մը , բայց ուր անոնց կիրառութե  
 և պործապրող տռաքիթին . բարե՛ . . . չճանչցաւ զայն ու  
 սոցիցը , և չմատակարարեց իւր աշակերտաց . չտվու-  
 ցան ծնողք և չաւանդեցին իրենց որդւոց իրք անըն-  
 պառ . ժառանգութիւն . դիուցաներն ալ չգիտեմ ինչ  
 կիրքերով վարակուած չեն ու զեր ընձեռել այս փրկա-  
 ռեալ գանձք . . . : Այսպիսի միջուկ պակսած են յաշ-  
 խարհեւ զայն բաշխող բարերարներ , քաւ լիցիւ , բանզի  
 թե անցեալ և թե ներկայ դարուց մէջ երեւեցան ըն-  
 տիր հոգիներ , որք իրենց անմահ դործերով ուսուցիւ  
 եղան մեղ , ահաւասիկ հին և նոր աղջաց պատմութիւն-  
 ները մեր առջեւ են , ուր կը գտնենիք բազարական . և  
 հայունասիրական սկարտաց անթերի կատարմանը հա-  
 մար ընափր սխացեաններ , որոնք զարմանալի դիսաւոր  
 առաջերաւ . նման մարդկութեան հորիզոնին վրայ տես-  
 նուելով ախուեցին իրենց օգտակար աղջեցութիւնը և  
 հեռացան , որոց յիշատակն անգամ մխիթարութիւն և  
 երջանկութիւն է մեզ . թողունք օտարները՝ որք թե-  
 րեւս շատերուն անծանօթ են , հոն պատմութեան մէջ  
 կը պանենիք Հայել մը , Երամ մը , Ամբատ մը , Վահան  
 մը , և թերեւս շատեր , որք կանուխ ճանցան իրենց  
 պարարք ՚ի պաշտպանութիւն Հայուննեաց , և մէյմէկ  
 յաւերժական պարծանք կանդնեցան աշխարհի վրայ .  
 կը գտնենիք հոն Ապրան մը , որ քազոքացւոյ մը ամեն  
 առաքինութիւննելն իւր վրայ անաղոտ փայլեցուց .  
 Ճանցաւ իւր պարտքը թե՛ առ Կոտուած թե՛ առ մար-  
 դիկ և թե՛ առ Հայունիս . որով բարձրացաւց սկարտուց  
 և իրաւանց սկզբունքը՝ բառնալով աշխարհէս մարդ-  
 կութեան և Կառուծոյ թշնամին . որով և անմահ կեն-  
 դանութիւն մը սերմանեց ամենուն որտին մէջ , և ու

նովէ որ այսօր իւր աղդ կ'ապրինք : Բայց ախտա որ այն  
 ալ իւր գերեղմանին հասած թշուառութեան անդուն  
 ուր գլորելու վրայ է . ըստ որում չմնաց Հայ աղդը իւր  
 առաջուան հինաւուրց փառաւոր վիճակին մէջ, դասա-  
 լիք եղաւ օտար աղդաց առջեւ, և չունի դոգցես այ-  
 սօր Հայասաան եռանդուն որդի մը՝ որ իւր վշտերը ըս-  
 տիովիէ : Բայց ինչու կ'ողբամ ես յուսահատած, միթէ  
 այս աւուր փառաւոր հանդիսիս մէջ դանուող Հոգե-  
 գումար խումբը չերաշխաւորե՞ր մեղ թէ՝ այս եռանդը  
 վառ է տակաւին Հայուն սրտին մէջ . ահա նոյն սրբա-  
 զան դդացմամբ լցուած չէ միթէ Առքին Արբազնու-  
 թիւնը և միաբանական ուխտը, որ իմաստութեան տա-  
 ճարիս ծոցը գումարուած Հայկական ժառանգաւոր սա-  
 նուցս այցելութեան ելելով՝ զմեղ իրենց խնամոցը տա-  
 կը կը կանչեն : Ով զմեղ խմբեց այս փառաւոր տաճա-  
 րիս մէջ . չէ որ սնդուղական Բարերար մ'էր այն, որ  
 թէ եւ հրաժարեցաւ կենցաղէս, սակայն իւր յիշատա-  
 կը անմահ սլիտի մնայ մեր սրտից մէջ . և մեք այսօր աղ-  
 նիւ եղբարք իմ, ինքղինքնիս երջանիկ սլիտի հսմարիմք  
 այս հաղուագիւտ շնորհաց արժանացած ըլլանուս հա-  
 մար, և տեսնելով ՚ի վահ վարժարանիս բազմեալ Ն սեմ  
 բազմականներ և դժառատ Ա Ե Հայեւտ մը, ոգի առ-  
 նունք, և որոց եռանդին ու ջանիցը վրայ չպիտի տա-  
 րակուսիմք . և սլիտի փութամք դիմելու յառաջ մեր  
 ուսման մէջ . վասն զի իրենց քաղցր ժսլիտը և խոստում  
 ները կը հաւաստեն, որ եթէ մենք մեր բարիքը ճանչ-  
 նանք՝ սլիտի խնամեն, և սլիտի հոդան ու մատակարա-  
 րեն մեզի այն ամեն կարեւորագոյն սլիտոյքներն՝ որոնք  
 մեր յառաջադիմութեան միջոցներն են . որով մեր մըտ-  
 քերը իմաստութեամբ և գիտութեամբ զարդանալով,  
 շեղեցիկ հասակնուս անդին ժամերը ՚ի տիւտ կատար

եալ մարդկութեան զոհելով երկրագելի բարձրելցն  
 Աստուծոյ շնորհիւր, կարող պիտի ըլլանք կատարեալ  
 մարդ ըլլալով՝ բարին ու չարը որոշել. և ինչ որ հոգւոյ  
 փրկութեան պէտք են, ինչ որ մեր սիրելի Աղդին կը  
 պարտինք, և ինչ որ մեր Հայրենեաց աղդակցաց կը  
 պատշաճի ընելու՝ կատարելապէս Ճանչնալն և գործելը  
 մեղի յանհրաժեշտից պիտի համարիմք, և կարող պիտի  
 ըլլանք անսնցմով Վեհափառ Արքազան Զօր մերոյ իղձը  
 և փափաքը սկսակելու, և միանգամայն առ հասարակ  
 ընդհանուր սիրելի Աղդիս ուրախութիւն պատճառե-  
 լով, անոր նախնական կորանցուցած բարոյական փառ-  
 քերը, երջանկութիւնները և սլայծառութիւնները վե-  
 րըստին ձեռք ձգելու. որովհետեւ ալ բաւական է որ  
 մեր սիրելի Հայրենեաց ծոցէն զրկուելով ասու և անդ  
 վայրավատին կը գտնուիմք: Աւրեմն ջանամք սիրելի եղ-  
 բարք իմ, մեր տղայական մաքերը իմաստութեամք զար-  
 գացունելու, որովհետեւ այս միայն կը պահանջեն մեղ-  
 նէ իրաւամք պատկառելի հանդիսականներս. քանզի  
 մեք սիտի փոխարինեմք համայն լրութեան միաբանու-  
 թեանս աղդասիրաբար աշխատանքին ու ճգանց մեր կա-  
 տարելութեամբը. ու քանի որ աշխարհիս մէջ կենդա-  
 նութեան արեւ մը կը վայելենք, սիտի ջանամք օր ըստ  
 օրէ զանդս մտաց մերոց մշակելու արօրով գիտութեան,  
 'ի փառս ամենասիրելի Աղդիս, և 'ի պարծանս Վեհա-  
 փայլներկայացուցչի Հայկազնեան տոհմիս:

ՏԱՅԱՏ Գ. ՊԵՑԼԵՐԵԱՆ  
 ԿԵՑՎԵՑԻ



## ԵՎՀԱ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Ե Բ Գ

1. Արդ ճշմարտութեան ծաւալի գալուն  
Ճշմարտափրին ՚ի սիրտ վեհազուն,

Յուղանց ՚ի վառ ՚ի սրբան լապտեր  
Կայծակն իրաւանց և արգալութեան,

Չոր ցայս վշյը ասկախտ արար յոչ կամսց .

Եւ շրջիտելոյ թէ զի՞նչ նրակառա՞ի

Իւր քրոտանցն իցեն և վախճան ըղթին .

Պատիւ երկրաւոր թէ սէր ու մնկեալից :

Բայց արդ ոչ այլ ինչ միայն ՚ի պատիւ

Ճշդնի ըսկպանց մեհ ճրշմարտութեան .

Յրովք մարդ վըսէմ կանգնի ախցեան

Խսէր ճրշմարտին հեղողի իսլ զարիւն :

2. Ոլ ճրշմարտութեան Սեբովը սիսարծարն :

Որ սաւառնելով ըզմբաօք թափուք

Աւիւն սուրբ ՚ի նա հեղուս ակալծուն .

Զարթնու յանըզոց զըւարթ և հուժկու .

Ախոյեան հըզօր ընդդէմ որտութեան

Կանգնի երդ մեակուռ , ժուժեալ բրոնութեան .

Մինչեւ պատառեալ զանաբդ նորուն պրօշ :

Չըդժէ ու խախն զերդ արի զինուոր :

Սա ճակատաբաց յասպարնզ մարտին

Հահատակ անահ ընդդէմ վաստ գընդին .

Ի ողսակ ըղթին յաքիւն ոչ ինայեալ

Գորզէ զիւր գրօշակ , կանքնեալ յաղթանակ :

ԱԼԻՔՍԱՆ ՄՐԱՊԵԱՆ

ԿԵՑՎԵՑԻ

## ՏԱԿԱՉԱՓՈԽԹԻՒՆ

### Ի ՄԵՇԻ ՎԵՐԴԱՌԵ

Այսօր դժխոյն վարդադաշն՝ շափիւղակեցա գահին երկնից  
Ի ցընծութիւն համակեալ ընդ շուք դօսհին Յօրդոմական.

Զոսէելթել նարօտն արկեալ ըղթլիութիւն նազելի

Նորահրաշ ինըն լուսով ծաշէ բարձունցն յԱրարատոց :

Ի հոլաթեւս բարձեալ խնամով՝ զօրը սցա մեծ բարելաստիկ  
Ճոխաճեմ վիհ զընացիւք իրու ըզկառո յաղթականի,

Դիմեալ խաղայ լեառնն Աթօն ուրախութեան տալ զաւետիս

Եւ զաւիւն ջերմ սուրբ սիրոյ զարթուցանել՝ ի սրբափ:

Հապա եւ դուք՝ մատաղ մանկունք՝ խըրախուսեալ օն սրիք  
Տաւիղ առեալ վիհ զգացման և աշութեանս Վարդանաց  
Վզգու ձայնիւ կացնք բարող՝ ի լուր Հայոց վիհ աղզին  
Եւ զօրհնութիւնս առ բարձլրեալ յերդ և՝ ի քընար նուագեցք :

Ծաղկեալ սալարիմն բարունակաց Մամիկոնեան տընկեալ որինոն  
Ազատութեան սուրբ կըրօնի և աղզութեան վաւեալ սիրով .

Ըզվաղնուցուելն ընդունել կեանո անեղծ փառուց խուզարկու :

Յուսոյն խարխոխ սլընդեալ յԱլուուած մըխի ՚ի գործ փառուուոր

Ի յԱւարոցք բաշտ զեւեցին ՚ի վայր մարտին հըսուիրեալ

Զընտիք ընտիք նահատակս և դեմական աշխարհին :

Բանակ կազմաւալ կուռ և անյալթ արի մաքտիկս գումարեաց

Ի արձանացեալ տոյ քաջալեր խրախուսական ձօյն կարդոյ :

Ու համահարդք իմ սիրելիք նիզուկահիցք սմվըկանդ

Ու սակաւ ճակատ տուեալ դէմ յանդիմայն թըն ոմեաց

Ի սեր փառաց և սկասուց աշխարհոյին թաղաւորի,

Չամենեսին հանդ խսացայք դորջես յաւթողք քան թէ սղարաւեսլք :

Առա քանին սներկեւղ անկ է լինել յայսմ մարափ

Որոյ սկասիւ վերաբերի առ որ բազմին ՚ի յեթերս

Արդ յուշ լիցին ձեզ հրամանք սուրբ քեսային եկեղեցւոյ

Ուրում հաւատս ընծայեր ՚ի սուլք սրբաւ և մատց

Ու մոռացօնս արկեալ վեղբարս ըզդարս զընկերըս սիրելիս

Ծրոց անշուշտ կախեալ կան կեանք ՚ի ճակատուս որ մընայ մեզ

Մի կընասիք մի թուլացին կորովք բազկոյ ձեր արութեան

Զի մի լիցին մեր համարիւնք առականաց նըստակ :

Անսու տն Ազտուած որթում զինոււր դուք գլեց յք հարազատք

Նու չօրաւեց լիցի անշուշտ տացի ողբակ յսղթութեան :

Հապա՞ արիք ու Հայկազունիք ըլլանգիտեալ 'ի սպառնալեաց  
 Ընդդեմ կը բել դընդին արեաց պատրաստ կացէք անմիհեր :  
 Խորհրդականոդ արիդ խորէն՝ քաջաղեղնը Ներշաղուհի :  
 Հուժկուդ թաթմուլ անյաղթելիդ, դու և Տաճատ դընթունի  
 Հոդեհատոր զհամայն եղբարս անողարտելի զշրականս  
 Կազմ 'ի ռազմ պատրաստեցէք 'ի շեփորոյն դու. ձոյնի :  
 Օ՛ն յաւաշ դիմեացուք արդ, ահա եհաս թըշնամին  
 Եւ ըղվերծին շիշտ հաւաստիս ցուցցուք մերոց քոջութեան .  
 Ամեհաբար դուցիթ տուեալ իբրու արծուիս խոյացուք  
 Ի հուր 'ի սուր մաշես ըղիսումբ զօրաց սկարսից վատասիրտ :  
 Ահա Ես առաջնորդ հանդերձեալ եմ հանդիսանալ  
 Վառեալ 'ի զէն, զըսահ 'ի լոնջ, մըկունդ առ զար 'ի ձեռին :  
 Բւտոի մըտք, կամու, մարմնով, շահատակեալ դիմագրտ  
 Ըզհայրենիս ջանացուք՝ յոյս վատարանց թափել ձեռաց :  
 Խակ եթէ զըլանաչց՝ մեզ տեսչութիւնը վերնական  
 Ըզյաղթութիւնն փարելի վերայ աղդին վայրենամիտ ,  
 Մեռցնք, սիրելիք մեռցնք սատին մեք քաջութեամբ ,  
 Յարիւն մեր թաթաւելով ալատեսցուք զեկերեցին .  
 Քանդի մեծ է սեր, Աստուծոյ քան դամենայն փառս երկրաւոր :

Ընդ բանս ընդ այս ամենեքին միահամուռ ձայն բարձեալ,  
 Զերինականու զօրացն ակումբ սատար հայցեն և զօրավիդ :  
 Վըստահաբար յորդան ետուն յեզը գետոյն դէմ Սասանեանց  
 Յարձուկիցան կըրկին կողմանիք հասին ճակատ առ ճակատ :  
 Անդ եր տեսիլ տիգաց ընդ տէդս և վահանաց ընդ վահանո ,  
 Բաղխմունիք սուսելց, սաղաւարտից, դարդմանակտաց ընդ միմեանս .  
 Շաշիւն շառաչ արձակին իբրու շանթիս կայծականց  
 Ճայթմունիք լարից աղեղանց սկատենազէն վառելց .  
 Զայն անդրադարձ արձագանդաց տային լելինիք և բոմբիւն  
 Եւ բալմութիւն խրտտութեան ահեղ նետից սլոքաւոր ,  
 Զարեդականն խաւարէին ըղճաւադայթոյթո բոցանըշուլ :  
 Թափ ընդ իբեարս ընդհարեաչք խօլք համազօր շահատակք ,  
 Քաջք 'ի քաջը խիզախեալ բոմբիւնիք հընչեն սոսկալի .  
 Գրամքամն ըղքամ զօրացեալ յաղթեն միմեանց և սկարտին ,  
 Անկեալք մընչեն ձայն բարձրանան կենազըրտւ դիականց :  
 Երտէս երբեմն յորդահոսան սնչըրեւք իջնալք 'ի վերուստ  
 Զայն խոխոյիւն տային գետոյն և ըւընջիւն անտառաց ,  
 Սապէս և այժմ հոնչիւնիք սոցա տան սօսափիւն լըսողաց  
 Իառենն մորմոք սըրտից մերոց նոցայն վըսեմ յիշատակ :  
 Յայնիմ մեծի տաղնապի արին Աարդան Մամկոնեան  
 Գրամմի յերկին, ակրտալիւ, միոք իւր յաղթմս արծակեալ

Եւր զօրսալիկ հայցելով ըզզշրադլուխն հաւատոյ  
Ամեհաբար գրոհ տայ դէմ գաղանդին ողարսկական։  
Ճօմեալ նիղակն յաջոյ ձեռոին կըմբեայ վահանն ՚ի ճախումն  
Արկեալ տապատ զընտիր ընտիրամարդկան անհաշո թըշնամւցն  
Եւ պառակտեալ ցան և ցիր ըդդաս զօրուն կացուցեալ  
և փախուստ տայ խուճապել մինչ ՚ի բանակն ապաստան

Գայլոց վոհմուկք ահաբեկեալ ՚ի սովառնալեաց սալուրին  
Եւ կատաղեալ ընդ սկարուումիւն և ընդ կորուստ ընկերոց,  
Ուխտս ընդ միմեանս սնիքան եղեալ դարձան անդրէն ՚ի ճակատ։  
Դիմէն վերայ անմեղ գառինն պատմէշ կանդնեն ըզնովաւ,  
Վէրո ՚ի վերայ անդրթաքար եղեալ տապատ արկանեն։  
Եւ զվարդենին գեռասիթիթ ՚ի սոյը ոըրոյն անդ խամրեալ  
Զվարդան անուն փառաւորեն գաշոն ՚ի հընձան վոխարկեն։  
Աւր ճըմեցան հաղար երաւն և վեց ողկոյզք Փըրկչին ոյզւոյն,  
Բոսորաքուղիս արեամբն իւրեանց եղեն վըրկիշ աղքին չայոց։  
Եւ դիմաւալ յերկիր արկեալ ՚ի բանակէն թըշնամեաց  
Զերիս հաղարս ըղինդ հարիւրո ըղքառասուն և չորս այ։  
Ազաւ եցին զեկեղեցին անխախտ հիման հաստատեալ։  
Արդ սիւասուն իմ եղբարք քանզի գըտոյզք արժանաւոր  
Կ'չէլ որդէք դիւցաղանց Մարտիրոսաց շառաւիղք,  
Առաւել քան զառտւել ջան ՚ի յանձին ունելով արդ  
Բարձրացուցք կամակար զեղջիւր նորոյ սուրբ Սիւնի,  
Աէր առ Վատուած սէր առ մարդիկ և սընուցիչ բարութեանց  
Մըտաց ոըրտի տայ ըստանալ ըղիսութիւն կըրթութիւն  
Ըրով կարեմք հանդիսանալ քաղաքացիք աշխատի։  
Եւ զհոց անուն ՚ի մ'ջ աղդաց սունել արդոյ փարելի։

### ԵՐԳ. Ի ՀԱՅԱՍՏԱՆ

## Ի ՏՕՆԻ ՄՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՑ

1. ՈՌ որ բազմեալ ես ճոխութեամբ բարձու ՚ի գահ ՌԱՄԵԼԵԱՆ,  
Եւ նըկատեն յալսո խորոց բերք բացափայլ Արտօւածեան։  
Հայեսց ո Տէր մարդասիրեալ հայեսց ՚ի մեզ հաշա ակամի,  
Հեղ զանդապատ ըղդըթութիւնդ ՚ի հայրենին դբախտավայլ։

2. Մի ՚ի ձեռաց քոց ըքքանչիր զեկեղեցին վեհապանծ,  
Արկեալ արեամբ քաջ Վարդանաց բացով վաւեալ ուրբ ոիրցդ։



1. Հայրենին արդ փութան Տեր և արտասուացն այց արմ։

Ն գիւցուզմէք Ճիխ զարդացն լզվայր Նոյեան տապանին։

3. Բարձ զարդիս լուծ ըզդերութեան, նորա աղաւա թօղ զորդիս։

Սէր միւսթիւն աղէ շնորհեա ՚ի փառո անճառ ուուր անուանգ։

Զիմաստութեանն ըզսուրբ բաժակ հաճեան ձնել Հոյկաղանց։

Կար զօրութիւն և խուզաղ կեանս Վեհապետիս Ազգասէր։

4. Զի անձանձրոյթ յար Սամացւալ ըղչայստան փոխեսցե։

Ի վեհ տաճար իմաստութեան պէս տաճարին Աթինայ։

Եւ զանդաստանը բանական ցողով հերիեալ քոց շնորհաց։

Ըզմիոս ըղսիրոս սուրբ արմ։ Տէր լինել արժան մարդկութնան։

Զոր անձկայրեաց մեր ժրաեւիք Հայտատանի որդիք թըշուառ։

### ՅԱԿՈՅ ՅԹՎԱԿԻՄ ԱԽՈՒՇԵԱՆ

#### ՊՈՒՍԵՑԻ

### ԵՐԳ

Եկայք մանկութիւն պար կամցեր

Առեք զոսկի Հոյկեան քնար։

Երդեւ նուազս գեղազուարն

Վեհապետին մեր բարեփառ։

Վեհապետին մեր դժառատ

Ար հաճութեամբ Վեհն ընդ խոնարհս

Զիջանի յոց Եւ ՚ի խախցոյ

Սանոց Հոյկեան ժառանգաւոր։

Օ՞ն զայլայլիկ Զեր սիրարծած

Հնչեցուցիք եւ դրուտուիս։

Զօն տուք ՚ի նուեր Վեհապետիս։

Մի վհատիք եւ մը դլայք։

Առ յառաջ մատիք յողնոն

Թառաջ զԶեր տալ հաւասիք

Եցախտագետ խռնախն սրաեց։

Զի անինաց տայ մեզ օք ինը

Աւ ՚ի պետալս իցն ուսման։

Զի քաջ ծանաւ ՚ի վա նուց


Տէր եւ Շակ ույղւոյս տհոս,

Թէ չեց բեշուն արդիւնք բնաւ  
Քայել յորթոյն եւ ոչ պատռղ.  
Եթէ շից՝ դարման նմա  
Տարեալ մշակն յանխնջ ի ջան.  
Օ՞ն երգեցնք, կեցցի յաւետ  
Հովհան Աղօիս վեհ Արամեան:

Զօյտ քաջ ծանիր մանու մատաղ.  
Նիզեան յուշի քում անմոռաց  
“ Թէ շտուցես պտուզ բարի  
Ի արփառուր ընդ երախտեց.  
Յոյժամ մշակն առեալ տապար  
Հանդունառիս որթոյն այնմիկ.  
Պայ հատանէ քուն յարմատոյն  
Ի ի հուր անշեց մոսնէ հաբուն և :

ՏԱՐԱՏ Գ. ՊԵՏՈՒՄԵԱՆ

ԿԻՉՎԱԿՑԻ



卷之三

卷之三









